

### 3. ԱՎՅԱՆԻ ՊԱՏԿԵՐՎՎՈՐՄԱՆ ԱՐՎԵՍԻ ՄԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆ

#### Ա. Է. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր իսկական գրող և հատկապես բանաստեղծ գրականության անդաստանում իր խոսքն է ասում ոչ թե և ոչ այնքան ինչ, որքան ինչպես ասածով, այսինքն՝ ոչ ասված բովանդակությամբ, այլ ձևով:

Համո Սահյանի ժանրային նախասիրությունը քնարական բանաստեղծությունն է, որը լիուլի բավարարել է բանաստեղծին իր գեղագիտական ու աշխարհայացքային պատկերացումներն ու ընկալումները ստեղծագործական նպատակադրման մեջ ամբողջացնելու համար: Քնարական բանաստեղծությունը, ծավալով փոքր լինելով, պահանջում է պատկերավորման միջոցների առավելագույն արդյունավետ, տեղին և գրական չափանիշներին հարիր կիրառում: Գրականագիտությունը վաղուց տեսականորեն ամրագրել է, որ «քնարական բանաստեղծությունների մեջ զծագրվող բնավորությունը բնութագրվում է ոչ թե գործողությունների կամ կենսական ռեալ հանգամանքների մեջ, այլ իր ապրումների, խոհերի ու հույզերի բացահայտման ճանապարհով: Դա քնարական բնավորության հիմնական առանձնահատկությունն է»: Ուստի քնարական շնչի և զգալուն հոգու տեր այնպիսի բանաստեղծը, ինչպիսին է. Սահյանն է, պատահականորեն չէր ընտրել չափածոյի նշյալ ժանրը: Չափածո խոսքի առանձնահատկությունների հրաշալի իմացությունը և նրա հնարավորությունների գերազանց պատկերացումը թույլ են տվել բանաստեղծին ամբողջովին բացահայտելու իրեն, ստեղծելու հայրենական պոեզիայի յուրօրինակ, զուտ սահյանական աշխարհը: Ժամանակին հայտնի տեսաբան Մ. Բախտինը, կարևորելով բանաստեղծության լեզվի դերը, նկատել է. «Միայն պոեզիայում է լեզուն բացահայտում իր բոլոր հնարավորությունները, քանզի նրան ներկայացվող պահանջներն այստեղ առավելագույն են. նրա բոլոր կողմերը ծայրահեղ լարված են, հասնում են սահմանային կետին. պոեզիան ասես քամում է լեզվի ամբողջ հյութը, և լեզուն գերազանցում է ինքն իրեն»: Է. Սահյանի բանարվեստի էական կողմերից մեկն էլ հենց այն է, որ լեզուն «գերազանցում է ինքն իրեն»: Լայնորեն օգտվելով պատկերավորման և լեզվաարտահայտչական ամենատարբեր միջոցներից՝ բանաստեղծը ստեղծում է պատկերավորման ուրույն համակարգ:

Է. Սահյանի ստեղծագործությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրա պոեզիայում պատկերավորման հիմնական միջոցը մետաֆորն է (փոխաբերություն): Այս հանգամանքին ուսումնասիրողներն ըստ էության ուշադրություն չեն դարձրել բանաստեղծի լեզվաոճական առանձնահատկությունները ներկայացնելիս<sup>1</sup>: Մինչդեռ այլաբերության տարբեր տեսակներից փոխաբերությանը նախապատվություն տալը արդեն շատ բան է ասում ստեղծագործողի մտածողության և աշխարհընկալման մասին: Ինչպես հայտնի է, դեռ անտիկ շրջանում Արիստոտելը գտնում էր, որ «Չափազանց կարևոր է հմտորեն օգտվել հոմանիշ և ափսափկ բառերից և ընդհանրապես

<sup>1</sup> Էդ. Ջրբաշյան, Պոետիկայի հարցեր, Եր., 1976, էջ 124:

<sup>2</sup> М. Бахтин. Вопросы литературы и эстетики. М., 1975, с. 46.

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, Ա. Հայրապետյան, Համո Սահյանի բանաստեղծական աշխարհը, Եր., 1977, Ա. Պապոյան, Չափածոյի լեզվական արվեստի հարցեր. Է. Սահյան, Վ. Դավթյան, Եր., 1976, Դ. Գասպարյան, Պոեզիան և կյանքի ճշմարտությունը, Եր., 1990 և այլն:

բանաստեղծական լեզվի ամեն տեսակից: Ամենից կարևորն է հետոքեն օգտվել մետաֆորներից: Պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է, որ սովորել չի կարելի: Այն իսկական տաղանդի նշանն է, քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը»<sup>4</sup>:

Փոխաբերությունը խոսքը դարձնում է ավելի պատկերավոր ու տպավորիչ: Գեղարվեստական մտածողության յուրահատկությունը բառական մակարդակում թերևս ուրիշ ոչ մի միջոցով այնքան բնորոշ ու հարուստ արտահայտություն չի կարող ունենալ, որքան փոխաբերության օգտագործումով, մանավանդ որ բառի նման իմաստով գործածությունը հիմնային նշանակություն ունի խոսքի պատկերավորությանն ու արտահայտչականության միջոցներից շատերի համար<sup>5</sup>: Անշուտ մետաֆորների բարձրաճաշակ ու տեղին կիրառումը Հ. Սահյանի պատկերավորման արվեստի միակ արժանիքը չէ: Բանաստեղծը ոչ պակաս արվեստով օգտագործել է նաև պատկերավորման այլ միջոցներ՝ համեմատություն, մակդիր, չափազանցություն և այլն: Այս առումով հատկանշական է այն բնորոշումը, որ տվել է տեսաբան Վ. Վինոկուրը բանարվեստի լեզվական առանձնահատկություններին անդրադառնալիս. «Գեղարվեստական խոսքը պատկերավոր է ոչ միայն այն առումով, որ անպայման մետաֆորիկ է: Որքան ուզում եք՝ կարելի է բերել ոչ մետաֆորիկ բանաստեղծական բառերի, արտահայտությունների, անգամ ամբողջական ստեղծագործությունների օրինակներ: Բայց իսկապես գեղարվեստական խոսքի իմաստը երբեք չի պարփակվում նրա ամփոփական իմաստի մեջ»<sup>6</sup>: Հ. Սահյանը պարզապես կարողացել է իր ընտրած թեմատիկան նաև մետաֆորների միջոցով ներկայացնելով՝ մարդաբանական և գոյաբանական կարևոր խնդիրներ բարձրացնել:

Հ. Սահյանի առաջին շրջանի ստեղծագործությունները՝ «Որոտանի եզերքին» (1946), «Առազաստ» (1947), «Սլացքի մեջ» (1950), «Միածանը տափաստանում» (1954), դեռևս որոնումների, նշգրտումների, ճանաչողության նախնական փուլի արտահայտություն էին, և ինչպես թեմատիկ-գաղափարական, այնպես էլ պատկերային մտածողությունը գերծ չէր զանազան կաղապարներից: Այս շրջանի բանաստեղծություններում մետաֆորը որպես պատկերավորման միջոց դեռևս այն ուժով ու խորությամբ չէր գործածվում, ինչ ուշ շրջանի ստեղծագործություններում: Չպետք է անտեսել, որ դրանք այսպես կոչված «անհատի պաշտամունքի» տարիներն էին. և լեզվի ու ոճի վերամբարձությունն ու արհեստականությունը հատուկ էին ժամանակաշրջանի բոլոր ստեղծագործողներին: Թեև պետք է նշել, որ այս տարիներին էլ Սահյանի պոեզիայում մետաֆորիկ մտածողության մի քանի փայլուն դրսևորումներ եղան հատկապես հայրենասիրական թեմայով: Այսպես, «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծությունը այսօր էլ շարունակում է մնալ նրա ամենասիրված ստեղծագործություններից մեկը և նույնիսկ երգ է դարձել.

Ես երգիչ հրի, սրի, շահ չունեմ քո սիրուց զատ,  
Քեզ նման կանաչ կյանքով, քեզ համար ելած մարտի,  
Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,  
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նաիրյան դալար բարդի՛:

Հետագա տարիներին, սկսած «Բարձունքի վրա» (1955) ժողովածուից, փորձելով տալ փիլիսոփայության հավերժական խնդրի՝ գոյության իմաստի իր պատասխանը, բանաստեղծը ստեղծել է յուրօրինակ բնափիլիսոփայություն՝ սպառիչ եզրաֆանգումներով: Մետաֆորիկ-այլաբանական խտացումներով նա կարողացել է հիմնավորել մարդ-տիեզերք համակեցության ներդաշնակ ընթացքի անհրաժեշտությունը, բացահայտել նրա ներքին կապերն ու փոխապայմանավորվածությունը և այն, որ այս միասնականությունն այլընտրանք չունի. այլընտրանքը կործանումն է:

<sup>4</sup> Արիստոտել, Պոետիկա, Եր., 1955, էջ 195:

<sup>5</sup> Տե՛ս Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 93:

<sup>6</sup> Գ. Օ. Винокур. Избранные работы по русскому языку. М., 1959, с. 390.

<sup>7</sup> Հ. Սահյան, Առազաստ, Բաքու, 1947, էջ 17:

Բացահայտումների այդ ճանապարհին Սահյանը կարողացել է նաև թափանցել ժամանակատարածական խորխորատները՝ համոզվելով տիեզերքի հարատևության, ժամանակի անընդհատության ու անսահմանության մեջ: Այս առումով Հ. Սահյանի մտածողությանը հոգեհարազատ է սփյուռքահայ մտածող Օաֆան Ռ. Պերպերյանի մոտեցումը ժամանակի խնդրին: Վերջինս, զարգացնելով ժամանակի բերզունյան ըմբռնումը, տարբերակում է ժամանակի երկու տեսակ՝ արտաքին կամ ժամացուցային և ներքին կամ երաժշտական: Ըստ Պերպերյանի՝ այս երկուսի հիմնական տարբերությունն այն է, որ եթե ժամացուցային ժամանակն ունի հասարակական բնույթ և օգտակարություն, ապա երաժշտականն ավելի անձնական է, մտերմիկ, ապրումներով հարուստ, անչափելի ու անտեսանելի<sup>6</sup>: Ժամացուցային ժամանակը միօրինակ է ու համասեռ, երաժշտականը տարասեռ է ու այլազան, այսինքն, մեր ապրումներից կախված, կարող է արագանալ կամ դանդաղել: Առաջինն ունի սկիզբ ու վերջ, երկրորդն անսահման է: Պահի ու հավերժականի փոխկապվածությունը Հ. Սահյանը հիմնավորել ու իմաստավորել է բազմաթիվ բանաստեղծություններում: Օրինակ.

Կյանքս վայրկյան է քո դարերի մեջ...<sup>7</sup>

Կամ

Ակնթարթի մեջ դու կուլ ես տալիս  
Այնպիսի մի նոր հավիտենություն,  
Որ խոսքս հազիվ հասած բերանիս,  
Դառնում է արդեն խորին հնություն<sup>8</sup>:

Բառի անմիջական, սովորաբար հաղորդակցական իմաստների հաղթահարումը գեղարվեստական խոսքի անխախտելի պայմանն է: Բանաստեղծական իմաստը չի փոխում կամ լրացնում անմիջական իմաստները, այլ ասես ավելանում է նրանց, սփռվում նրանց վրա: Քանզի բառի մեկ իմաստի սովորական փոխարինումը մյուսով գեղարվեստական փաստ չէ<sup>9</sup>:

Հ. Սահյանի պոեզիայում մետաֆորը գործածության լայն ընդգրկում ունի՝ բառ-մետաֆոր, պատկեր-մետաֆոր, ամբողջական ստեղծագործություն-մետաֆոր: Դրանց կիրառման հաճախականությունը բերում է այն բանին, որ երբեմն դառնում են խորհրդանշաններ: Այսպիսի խորհրդանշաններ են Որոտանը, քարափը, անտառը, քամին, կայծակը, գույները, թվերը և այլն: Հափազանց հետաքրքիր է Սահյանի գունային սիմվոլիկան.

Իջավ սարյակը դաշտում – ծիլ էր կտուցին.–  
Շուրթիս վրա մի կանաչ տող էր թաքտում:

Արտից տատրակը թռավ – հասկ էր կտուցին.–  
Շուրթիս վրա մի կարմիր տող էր թաքտում:

Միծառն անցավ երկնքով – ամպ էր կտուցին.–  
Շուրթիս վրա մի դեղին տող էր թաքտում:

Կոռաց ագռավը ձորում – ձյուն էր կտուցին.–  
Սրտիս վրա մի ճերմակ դող էր թաքտում<sup>10</sup>:

Այս մի քանի տողում կիրառված գեղեցիկ գունախաղի շնորհիվ բանաստեղծը կարողանում է խտացնել և արտացոլել մի ամբողջ կյանք՝ ծնունդից մինչև մահ:

Գեղարվեստական ստեղծագործություններում պատկերավորման այս ձևը նոր չէ և գալիս է միջին դարերից: Միջնադարյան գրականության մեջ մետաֆորին

<sup>6</sup> Տե՛ս Զաքարիա քհն Սարիբեկյան, Ժամանակի պերպերյանական ըմբռնման գործնական նշանակությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1999, թիվ 2, էջ 19:

<sup>7</sup> Հ. Սահյան, Երկեր, 2 հատորով, հ. 1, Եր., 1984, էջ 254:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 217:

<sup>9</sup> Տե՛ս Ժ. С. Лихачев, Поэтика древнерусской литературы, М., 1979, էջ 113:

<sup>10</sup> Հ. Սահյան, Զարափների երգը, Եր., 1968, էջ 131:

փոխարինում էր խորհրդանշանը: Ընդհանրապես միջնադարյան գրականությունն ու արվեստը խորհրդանշական էին: Այն, ինչ հաճախ մենք համարում ենք մետաֆոր, պարզվում է՝ քողարկված խորհրդանշան է՝ նյութական և հոգևոր աշխարհի համապատասխանության գաղտնիքի բացահայտման փնտրտուքից ծնված... Խորհրդանշանները գրականություն էին բերում վերացականություն և իրենց գոյությամբ իսկ ուղղակի հակընդդեմ էին պատկերավորման հիմնական այլաբերական միջոցներին՝ փոխաբերություն, մետոնիմիա, համեմատություն ևն, որոնք հիմնվում էին նմանության, համապատասխանության կամ հիմնականի հստակ տարանջատման, իրական դիտարկման, աշխարհի կենդանի և անմիջական ընկալման վրա<sup>13</sup>:

Սահյանի դեպքում սա թերևս անխուսափելի է, քանի որ իր ստեղծագործական հումքը վերցնելով բնությունից՝ նա տարբեր երևույթների նմանության հիման վրա մի երևույթի անունը փոխարինում է մյուսով՝ հաճախ հասնելով այնպիսի ընդհանրացումների, որ տվյալ երևույթը կամ պատկերը իսկապես ձեռք է բերում խորհրդանշանի նշանակություն: Ընդ որում, Սահյանը չի բավարարվում միայն երևույթների արտաքին նմանությամբ, նա ձգտում է գտնել նրանց ներքին աղերսները: Օրինակ.

**Արև է, անձրև է գալիս.**

**-է՛հ, գայլը ցկնում է:**

**Խնձորը կարմրին է տալիս**

**Եվ ծառից ընկնում է<sup>14</sup>:**

Առաջին հայացքից թվում է, թե հանգավոր բանաստեղծության սովորական օրինակ է: Արտաքուստ կարծես ոչ մի արտակարգ բան չկա, հասունացած պտուղը արևային անձրևի պահին ծառից ընկնում է: Բայց եթե ուշադիր ենք զննում ներկայացված պատկերը, այնքա՛ն դրամատիզմ ու ապրում ենք տեսնում այս մի քանի տողի մեջ: Մայր ճյուղից պոկված խնձորի անկման արագությունը կարծես մի ամբողջ կյանքի տևողություն լինի: Ընկնող խնձորը դառնում է մահվան խորհրդանիշ: Սակայն նույն պահին հիշում ենք, որ բնության մեկ այլ անկյունում ծնունդ է, կյանքի սկիզբ: Միաժամանակ ծիծաղող ու լացող բնության խոսքի՝ արև - անձրև հակադրության ֆոնին գայլի ցկնելը դառնում է կյանքի անվախճանության, հարատևության խորհրդանիշ, և համոզվում ենք, որ հաջորդ տարի ևս խնձորենին նոր պտուղներ կտա: Հաղթանակում է բնության անվախճանության և մահվան հաղթահարման գաղափարը: Փաստորեն ընդամենը չորս տողում բանաստեղծը կարողանում է ստեղծել մի քանի ամփոփ խորհրդանշան-պատկեր: Իսկ սա արդեն բանաստեղծի անվիճելի տաղանդի վկայությունն է:

Պատահական չէ, որ Բ. Պատտեռնակը ասում է, թե մետաֆորիզմը մեծ անհատականության տղագրությունն է, նրա ոգու արագագրությունը: Մետաֆորիզմը մարդու անհարատևության բնական և երկար ժամանակ մտածված խնդիրների ահռելիության հետևանքն է: Այդ անհամապատասխանության պարագայում նա ստիպված է իրերին նայել արծվի սուր հայացքով և բացատրվել ակնթարթային ու անմիջապես հասկանալի մտքի փայլատակումներով: Դա էլ հենց պոեզիան է<sup>15</sup>:

Հ. Սահյանի պոեզիան լի է այդպիսի փայլատակումներով: Մետաֆորիկ մտածությունն ու տարատեսակ մետաֆորների կիրառումը օգնում է բանաստեղծին շնչավորել, անձնավորել բնությունն ու երևույթները՝ դրանով իսկ ամբողջականացնելով իր ստեղծագործական նպատակադրման հիմնադրույթը. մարդն ու բնությունը օրգանական միասնություն են, և այդ համադաշնության ցանկացած խաթարում աղետաբեր հետևանքներ է ունենում թե՛ մեկի, թե՛ մյուսի համար: Բնության շնչավորումը կատարվում է մարդու, մարդկային հարաբերությունների և բնության առարկաների ու երևույթների արտաքին ու ներքին ընդհանրությունների վերհանման ճանապարհով: Բնությունն ամբողջովին ապրում, շնչում, շարժվում է մարդկային հասարակությանը հատուկ օրինաչափություններով, հակասություններով, տրամադրություններով.

<sup>13</sup> Տե՛ս Դ. Ս. Лихачев, նշվ. աշխ., էջ 164:

<sup>14</sup> Հ. Սահյան, Սեզամ բացվիր, Եր., 1972, էջ 48:

<sup>15</sup> Տե՛ս Բ. Альфонсов, Поэзия Бориса Пастернака, Л., 1990, էջ 350:

Քար ու քերծից էք է խլում,  
 Գլուխը կախ գնում, գնում,  
 Լորագետից ջուր է խմում  
 Մարավ կածանը:  
 Մանաչելով հեռվից-հեռու,  
 Ինձ կանչելով հեռվից-հեռու,  
 Լորագետից ջուր խմելու  
 Տարավ կածանը:  
 Ոտքս առավ ծնկի ծալին,  
 Ելավ կանգնեց ոտքի ծայրին,  
 Կանաչ-կարմիր կապեց սարին  
 Պառավ կածանը:  
 Գետից ափով ջուր տվեց ինձ,  
 Քանի մարդուց լուր տվեց ինձ,  
 Եվ ինձանից ոչի՛նչ, ոչի՛նչ  
 Չառավ կածանը<sup>16</sup>:

Եռվնախիսի նրբանկատությամբ Հ. Սահյանը մարդուն է բնականացնում՝ ներկայացնելով նրան իրն բնության ամբողջականության կրող: Մարդու իրական, զգայական, ֆիզիկական ինքնագագաղթությունը տարածվում է ամբողջ աշխարհի վրա, մարդն ընդգրկում է իր մեջ տիեզերքը, իրեն ու առարկաները, երևույթները՝ պարփակվելով մեկ միասնական ամբողջության մեջ: Սա ինքնաճանաչման, ինքնագնահատման այն աստիճանն է, երբ մարդը բնության կատարելության, վեհության առջև ոչ թե կուրորեն ծնկի է գալիս, այլ գնում է միավորվելու նրան, մաքրվելու, հասնելու կատարիսիսի.

– Այս տերևը, որ դողում է ծառին,  
 Եվ մաշվող ցողի փակվող աչքի մեջ  
 Հալվող պատկերն իր փրկել է ջանում,—  
 Ես նրա ջանքն եմ առեղծվածային,  
 Առեղծվածային նրա կյանքն եմ ես:

...Ծնչառությունն եմ ես տիեզերքի,  
 Փորձառությունը նրա շնչավոր,  
 Մոլորակների փոխայցելության  
 Ու մտերմության հավատամքը խոր  
 Եվ նրանց բոլոր հարսանիքների  
 Համագարկերի արձագանքն եմ ես<sup>17</sup>:

Ամփոփելով՝ նշենք, որ Հ. Սահյանի պատկերավորման համակարգում մետաֆորը, որպես պատկերավորման հիմնական միջոց, իր բազմազան դրսևորումներով առանձնակի խորիմաստություն ու զրավչություն է հաղորդում նրա պոեզիային, որն էլ բանաստեղծի ստեղծագործության կարևոր առանձնահատկություններից մեկն է:

**А. Э. ОВАКИМЯН - Об одной особенности поэтического языка А. Сагияна.** - В статье рассматривается метафора как основное средство выразительности в поэзии Амо Сагияна. Искусное сочетание метафоры с другими тропами, а также интенсивная образно-метафорическая инструментовка стиха, отражающая специфику поэтического мышления, становятся в творчестве А. Сагияна основой решения идейно-содержательных задач.

<sup>16</sup> Հ. Սահյան, Քարափների երգը, Եր., 1968, էջ 56:

<sup>17</sup> Հ. Սահյան, Մայրամուտից առաջ, Եր., 1964, էջ 168: